ԿԱՐԾԻՔ

Հովհաննես Վահագնի Հովհաննիսյանի «Վաղ քրիստոնեական դավանաբանական վեճերի կրոնագիտական վերլուծություն (II դարի II կես – V դարի I քառորդ)» Թ.00.05 «Կրոնի տեսություն և պատմություն (պատմական գիտություններ)» մասնագիտությամբ պատմական գիտությունների դոկտորի մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության մասին:

Աստվածաբանական մտքի պատմության ուսումնասիրության ուղղությամբ գործ դրված ամեն ջանք և աշխատանք ինքնին գնահատելի է: Սա առավելագույնս վերաբերում է հայ իրականությանը, որը չի կարող հպարտանալ կրոնաաստվածաբանական աշխատությունների առատությամբ: Ուստի Հ. Հովհաննիսյանի ներկա դոկտորական ատենախոսությունն անտարակույս իր նպաստն է բերում գիտության այդ մարզին: Հասկանալի պատճառով ժամանակին արված վեհերոտ և աչառու գնահատականներին խնդրո առարկա ատենախոսության մեջ փոխարինելու են գալիս փաստերի համակողմանի լուսաբանումներ, առավել սթափ և իրատես գնահատումներ, որոնք հենված են նյութի ոչ կանխակալ համադրումների և արժեվորումների վրա: Ժամանակին տարբեր առիթներով կատարված հետազոտական հարցադրումներ այս ատենախոսության մեջ ստանում են իրենց պատշաճ պատասխանը: Ուսումնասիրության ենթակա նյութի թելադրանքով ատենախոսությունը տրոհված է երեք գլուխների. Ա՝ «Եկեղեցու ներքին կյանքը և դավանական կացությունը II դարի երկրորդ կեսից մինչև IV դարի երկրորդ կես» , Բ՝ «IV դարի վերջին քառորդի հակաապոլինարական քրիստոսաբանական դոկտրինալ համակարգերը» , Գ՝ «Քրիստոսաբանական դավանական վեճերը 420-430-ական թվականներին»: Սրանք ունեն ենթաբաժիններ, որոնցում լուսաբանված են գլխի մեջ առաջադրված հարցերը: Ատենախոսության մեջ գլխավորաբար քննության են ենթարկված

ժամանակը հուզող քրիստոսաբանական խնդիրները, որոնք հայելացնում են քրիստոնեական հայտնության նկատմամբ որդեգրված տարբեր մոտեցումները: Առաջին գլխում ներկայացվում է եկեղեցու ներքին կյանքը, դավանական իրավիճակը II դարի երկրորդ կեսից մինչև IV դարի երկրորդ կես: Մասնագիտական գրականության հիման վրա և այդ գրականության նորովի լուսաբանությամբ ատենախոսը վերհանում է վարդապետական այն օրինաչափությունները, որոնք բնորոշ են եղել միապետականների հավատքային ընկալումներին: Նա իրավացիորեն նկատում է, թե դրանք գերազանցապես հիմնված են եղել համատես ավետարանների և Հովհաննեսի Ավետարանի բացառապես պատմական կողմի վրա: Լոգոսի վարդապետության ոչ բավարար մշակվածության հետևանքով միապետականների մի մասը հակվեց որդեգրության կամ հիլիազմի ուսմունքին: Այս համատեքստում մասնավոր քննության նյութ է դարձել Պողոս Սամոսատցու միապետական աստվածաբանությունը, որը ոչ այլ բան էր քան ընդդմակայումը հունական գիտության: Հանձին Պողոս Սամոսատցու վարդապետության դրսևորվում է ասորական քրիստոսաբանությանն այնքան բնորոշ մարդաբանական բացարձակաբանությունը (մաքսիմալիզմ): Շեշտելու համար այս պարագան Հովհաննիսյանը վկայակոչում է Եվսեբիոս Կեսարացու Պատմության՝ Սամոսատցու ուսմունքը խտացնող հետևյալ արտահայտությունը՝ «Լոգոսը Հիսուս Քրիստոսի մեջ ապրել է ինչպես Աստծո տաճարում»: Այնուհետև ատենախոսը ոչ առանց հիմքի անհրաժեշտ է համարում կանգ առնել ջատագովական քրիստոսաբանության վրա: Նա նկատում և արձանագրում է այն էական պատճառները, որոնք պայմանավորել են ջատագովական քրիստոսաբանության առանձնահատկությունները: Հաստատվում է այն իրողությունը, թե ջատագովական գրականության մեջ հաղթահարվել է փիլիսոփայական-աստվածաբանական վերացարկումների միակողմանիությունը ,և ապացույցների ծանրության կենտրոնը տեղափոխվել աստվածաբանական իրականություն: Այս շրջանում կենցաղավարած մի շարք եզրեր (Աստվածամարդ, համագոյություն, Աստվածածին, Երրորդություն և այլն) պետք է

կարևորագույն տեղ զբաղեցնեին քրիստոնեական աստվածաբանության հետագա պատմության մեջ: Ջատագով հայրերի աստվածաբանական ըմբռնումների հետախուզումն իրականացված է քրիստոսաբանական եզրույթների լուսաբանության հիման վրա, ինչը հնարավորություն է տալիս բացահայտել ու գնահատել այն դերակատարությունը, որ դրանց վիճակվել է քրիստոնեական մտքի պատմության մեջ: Այսպես Հիպոլիտոս Հռոմեացու կամ Բոստրացու ժառանգության մեջ հանդիպող «Լույսը ՝ լույսից, աղբյուրը՝ ակունքից, ճառագայթը՝ արեգակից» քրիստոսաբանական ամփոփումը պետք է գրեթե նույնությամբ կիրառվեր Ալեքսանդր և Աթանաս Ալեքսանդրացիների երկերում և Հայ եկեղեցու դավանական գիտակցությունը խտացնող «Հաւատամքում»:

Ատենախոսը պատշաճ անդրադարձ է կատարում Որոգինեսի, Տերտուղիանոսի աստվածաբանությանը, լուսաբանում այն եզրերը (հիպոստասիս, ուսիա, ֆիսիս), որոնք կիրառվել են նրանց ժառանգության մեջ: Ըստ այսմ վերհանվում է նրանց քրիստոսաբանության ու երրորդաբանության մեջ ներկա ենթակարգայնության (սուբորդինացիա) գաղափարը:

Սթափ իրատեսությամբ գնահատված է IV դարի 60-70-ական թվականներին տիրող եկեղեցաքաղաքական վիճակը, երեք հզոր հոսանքների՝ նիկիականների, նմանաբնութենականների (օմիուսիականներ) և նմանականների(օմիականներ) միջև ընթացող բանավեճը, Անկյուրիայի 358 թ. եկեղեցաժողովի պատմական կարևոր դերը, որը լուրջ խթան դարձավ դեպ նիկիական դավանության անցման համար: Հակառակ փաստական նյութի սակավության Հովհաննիսյանին հաջողվել է տալ այդ շրջանում գլուխ բարձրացրած հոգեմարտական հերձվածի ընդհանուր բնութագիրը: Ատենախոսն իրավացիորեն այն կապել է հակաերրորդական հոսանքների հերձվածողական գաղափարախոսության հետ: Ալեքսանդրյան և Անտիոքյան քրիստոսաբանական ընկալումների տարբերությունն օրինաչափորեն կապվում է Ալեքսանդրյան դպրոցին ընտանի մտածողության իռացիոնալ (պլատոնականություն) եղանակի հետ, իսկ Անտիոքյանի պարագային՝ ռացիոնալ (

արիստոտելականություն) մտածողության մեթոդին: «Նախ այն պատճառով, որ աստվածաբանական այդ բոլոր լուծումները յուրատիպ որոնումներ են, այլ ոչ թե հայեցակարգեր» (113): Ուստի դրանցից ամեն մեկի հանդեպ հարկ է «կիրառել գործընթացային մոտեցում»: Այս հիմամբ ատենախոսն համարում է, թե վերանայման կարիք ունի այն կարծրատիպը, համաձայն որի նշված կենտրոնների տարընթաց գաղափարներն ուղղակիորեն կապված են Պլատոնի և Արիստոտելի գաղափարների մեխանիկական որդեգրման հետ: Բանն այն է, որ տարընթաց հոսանքներն ունեցել են փրկագործության և արարչության հետ աղերսված մի շարք ընդհանրություններ:

Ատենախոսության Երկրորդ գլխում, հանձին Դիոդորոս Տարսոնացու, Թեոդորոս Մոպսուեստացու, ինչպես նաև՝ Ալեքսանդրյան և Կապադովկյան քրիստոսաբանության, լուսաբանված են ժամանակի հակաապողինարական քրիստոսաբանության վարդապետական առնձնահատկությունները: Ատենախոսը վերհանում է Թեոդորոս Մոպսուեստացու քրիստոսաբանական վարդապետության ուղղակի կապը նեստորական վարդապետության հետ: Ըստ այսմ մատնանշված են Մոպսուեստացու քրիստոսաբանության վարդապետական երեք գլխավոր տկարությունները. անձնավորյալ Քրիստոսի բնութենական երկատում, Քրիստոսի բացառապես մարդ համարվելը, Մարիամի Աստվածածին լինելու մերժումը :

Ալեքսանդրյան քրիստոսաբանությունը ներկայացնելիս միանգամայն օրինաչափորեն այն լուսաբանվում է բացառապես ս. Աթանասի վարդապետական ժառանգության հիման վրա: Ատենախոսն իրավացիորեն նկատում է, թե փրկագործության հեռանկարն այստեղ սերտորեն կապված է «կենոտիկ լուծման» հետ (217): Կապադովկյան հայրերի քրիստոսաբանական վարդապետության մասին խոսելիս Հովհաննիսյանը ոչ առանց հիմքի կարևորում է բնությունների տնօրինական միավորության գաղափարը, որը կիզակետն է մասնավորաբար ս. Բարսեղի ուսմունքի: Էապես այս գաղափարին է աղերսված Գրիգոր Աստվածաբանի «երկու բնությունների միության» բանաձևը: Պայքարելով ապողինարյան

մտայնության դեմ նա Բանի կատարյալ մարդացումը երաշխիքն է համարում կատարյալ փրկագործության (248): Գրիգոր Աստվածաբանն իր խոսքի սլաքն ուղղում է նաև անտիոքյան երկաբնակության, մասնավորաբար «երկու Որդու» վարդապետության դեմ: Իր խոսքն առավել ամբողջական դարձնելու նպատակով ատենախոսն անհրաժեշտ է համարում անդրադառնալ նաև անտիոքյան խոտելի մարիամաբանության նկատմամբ Գրիգոր Աստվածաբանի քննադատությանն, ըստ որի՝ «Ով Մարիամին Աստվածածին չի համարում, օտարված է Աստվածությունից»:

Իր խոհակից բարեկամների նման, պատշաճը հատուցելով, Գրիգոր Նյուսացին ևս պախարակում է Ապողինարի քրիստոսաբանական հերձվածը: Ըստ այսմ նա հաստատագրում է, թե անձնավորյալ Քրիստոս երկու կատարելության անխառն և անշփոթ միություն է (259): Սա նշանակում է, թե տեղի է ունեցել «հատկանիշների փոխանակություն» (communication idiomatum), այն է՝ մարդացյալ Աստուած Բանը կենսագործել է աստվածային և մարդկային միավորյալ բնությամբ:

Ատենախոսության Երրորդ գլուխը նվիրված է 420-430-ական թվականներին լայն ծավալ ստացած քրիստոսաբանական վիճաբանությունների լուսաբանությանը: Հայ աստվածաբանական մտքի պատմության մեջ թերևս առաջին անգամ լինելով, նեստորական սկզբնաղբյուրների իրատես, հանգամանալից վերլուծմամբ բացահայտված են այն բոլոր շարժառիթներն ու պատճառները, որոնք հիմք են դարձել Նեստորի քրիստոսաբանական դիտումների համար: Հովհաննիսյանը նեստորյան քրիստոսաբանությունն իրավացիորեն շաղկապում է նրա մարեմաբանական համոզումներին, որոնցից սնվում են նրա հերձվածի հիմնադրույթները: Փաստական նյութի անաչառ լուսաբանությամբ ատենախոսը գալիս է այն եզրակացության, թե «հակամարտող կողմերի միջև համերաշխություն չի հաստատվել ոչ թե Կյուրեղի, այլ Նեստորի գործունեության արդյունքում»(295): Նեստորական քրիստոսաբանության հանգամանալից քննությունից հետո մասնավոր վերլուծման է ենթարկվում Կյուրեղ Ալեքսանդրացու քրիստոսաբանությունը: Խնդրի պարզաբանման համար ընտրված այս եղանակը

հնարավորություն է տալիս կյուրեղյան հաստատումները հասկանալ նեստորյան պնդումների ետնախորքի վրա, թափանցել մեծանուն ալեքսանդրացու քրիստոսաբանության ներքին խոհանոցի մեջ, տեսնել այն միջոցները, որոնց կիրառությամբ նա դավանական ճշմարտությունները արտացոլումն է համարում հայտնութենական ճշմարտությունների, որոնց նպատակը մարդու փրկությունն է: Ի տարբերություն նեստորյան քրիստոսաբանության, ուր բնությունների տարբերությունները նկատվում են որպես ինքնակա սուբստանցներ, կյուրեղյան հայեցության մեջ «մարդեղացած Որդու անձում աստվածայինի և մարդկայինի փոխհարաբերությունը մեկնաբանվում է իբրև սերտ և անքակտելի միություն» (355-356): Նեստորյան քրիստոսաբանության տրամաբանական հաշվարկներին կյուրեղյան քրիստոսաբանության մեջ փոխարինելու են գալիս հավատքային ճշմարտությունների վերտրամաբանական, խորհրդական վերացարկումները, որոնք դառնում են ուղղափառ քրիստոսաբանության հաստատագրումը :

Ցավոք ատենախոսությունը զերծ չէ մի շարք թերություններից.

ա/ հայագիտական նյութի, հայ թարգմանական գրականության ոչ բավարար օգտագործում, որի հետևանքով հեղինակային պատկանելության հետ կապված որոշ հարցեր մնում են անպատասխան: Այսպես, քննարկվում է Աթանասի անունով հայտնի «Ընդդեմ Ապողինարի» երկի հեղինակային պատկանելության խնդիրը, հաստատվում, թե « մասնագիտական գրականության մեջ թեև վիճարկվում է այդ աշխատանքի հեղինակային պատկանելության հարցը, սակայն փաստ է նաև, որ որևէ լուրջ փաստարկ չի առաջադրվել այն մասին, որ այն «ալեքսանդրյան չէ» (208-209): Մինչդեռ հայերեն ձեռագրերում, ինչպես նաև՝ VII դարում կազմված « Կնիք հաւատոյ» դավանաբանական ժողովածուի մեջ (Մատենագիրք հայոց, հտ.Դ, էջ 105-115) այն բերված է Բարսեղ Կեսարացու անունով: Ի լրումն նկատենք, որ այդ երկը վաղ միջնադարից մաս է կազմել ս. Բարսեղի « Պահոց» գրքի (տպ. աշխտ.Կ. Մուրադյանի, Ս. Էջմիածին, 2008,էջ 285-300):

բ/ Ս. Իրինեոսի հայացքները ներկայացնելիս ատենախոսի տեսադաշտից դուրս է մնացել նրա՝ միայն հայերեն թարգմանությամբ հայտնի « Ցոյցք առաքելական քարոզութեանց» երկը, որը բավական նյութ է պարունակում խնդրո առարկա հարցերի վերաբերյալ: Նույնը պետք է ասել հայ իրականության մեջ ս. Եփրեմի անունով հայտնի, սակայն իրապես Ապողինարին պատկանող Ս. Երրորդության նվիրված ճառի հայերեն թարգմանության վերաբերյալ: Սրա բնագրագիտական քննությունը հնարավորություն կտար վերհանել այն արձագանքը, որ ապողինարյան քրիստոսաբանությունը ունեցել էր հայ իրականության մեջ (տպ .Բ. Ուտիե, ԲՄ,1977, 12, 163-167):

գ/ Վկայակոչելով Որոգինեսի « Որդին Հայր Աստծո հիպոստասային ցանկության ծնունդ է» խոսքը (45)՝ ատենախոսը չի վերհանում այդ խոսքի շարժառիթը, որը արձագանքն է տվյալ ժամանակի աստվածաբանական փիլիսոփայական իրավիճակի:

դ/ Թվում է մեղքի ոչ թե ժառանգական, այլ անհատական լինելու վերաբերյալ Թեոդորոս Մոպսուեստացու գաղափարը ատենախոսին կարող էր իրավունք վերապահել այդ գաղափարը հարաբերել Պելագիոսի համաբնույթ վարդապետությանը (168-169):

ե/ Արտաքին բնույթի թերություններից արձանագրելի է այն, որ ատենախոսությունում կիրառված չեն գիտության մեջ ընդունված աղբյուրների համառոտագրությունները. օր. J-P Migne-ի հայրաբանական նշանավոր մատենաշարը վկայակոչելիս միշտ լրիվ բերվում են հրատարակչական տվյալները:

զ/ Աչքի է զարնում « պնդել» բառի ոչ պատշաճ կիրառումը (244,245 և այլուր): Այն կիրառված է հիմնականում դրական իմաստով, ինչը ոճական սխալ է, քանզի այն ունի բացասական երանգ : Նկատվում է բառի ոչ տեղին օգտագործում.» պնդումը վիճաբանական է» (233) **փխ.** պնդումը վիճարկելի է :

է/ Ոչ հայերեն եզրերի կիրառում՝ «դիսցիպլինար» , «դոկտրինալ» , «կոալիցիա», «պրոբլեմատիկա», «իմպուլս»: Ոչ հայերեն բառաբարդում. «անձամիջյան» (298) **փխ.** « միջանձնային» :

ը/ Քերականական անհամաձայնություն» չարչարանքները...չի կարող անդրադառնալ» (93), «ընկած է եղել...որոնումները» (113) և այլուր :

Կարծում եմ՝ այս թերությունները դյուրավ հաղթահարելի են: Հ.Հովհաննիսյանի <<Վաղ քրիստոնեական դավանաբանական վեճերի կրոնագիտական վերլուծություն (II դարի II կես-V դարի I քառորդ)>> դոկտորական ատենախոսությունն արտացոլված է սեղմագրում , իսկ հեղինակի հրատարակած գիտական հոդվածները ներկայացված են ատենախոսության մեջ:

Հիմնվելով վերոբերյալի վրա՝ արձանագրելու է, թե կատարված աշխատանքը բավարարում է դոկտորական ատենախոսությանը ներկայացվող պահանջներին, իսկ Հովհաննես Վահագնի Հովհանիսյանն արժանի է իր հայցած պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճանին, որի համար միջնորդում եմ Երևանի Պետական Համալսարանում գործող ԲՈԿ-ի մասնագիտացված գիտական խորհրդի առջև:

Պաշտոնական ընդդիմախոս՝ փ.գ.դ.,
Մաշտոցի անվան Մատենադարանի
ավագ գիտական աշխատող Հ.Հ. Քյոսեյան

Պաշտոնական ընդդիմախոս՝ փ.գ.դ. Հ.Հ. Քյոսեյանի
Ստորագրությունը հաստատում եմ:
Մաշտոցի անվան Մատենադարանի գիտքարտուղար պ.գ.թ. Վ. Հ. Թորոսյան

9 հունվարի 2020թ.